

7379

2.2.7.

Фундаментал
2.3.7. 9-
047-h. Типък нравъжето

329.14

2-24

6.

1520

2010

4.2.

329.1 ՄԻԱՅՆ ՄԱԿՐԱՆԵՐԻՆ ՀԱՄԱՐ
3-16

329.14
3-24

493

10,027



ՔԱՂԻԱԹՆԵՐ

Հ. Յ. Դ. Գ-րդ Լեղի. Ժողովի

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՑ

6295
6296

Հայոց ակուբին
Հ. Յ. ԳԱՅՆԱԿՑՈՒԹԵԱՆ

1920

Ելեկտրօ-տալարան «ՈՒՐԱՐԴԻԱ» Երևան,

329.14
Ք-16

2002

ՔԱՂԻԱԾՆԵՐ Հ. Յ. Դ. 9 բդ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՑ

Հ. Յ. Դ. 9 բդ ընդհ ժողովը որ հրաւիրւել էր Արևելեան և Հայաստանի բիւրօների կողմից, նախօսք կազմւած ընդարձակ օրակարգով, հանդիսաւորապէս բացւեց Երևանում՝ 1919 Սեպտ. 27-ին, մասնակցութեամբ գրեթէ բոլոր դաշնակցական իրաւասումարսինների, հետեւել պատկերով:

ԽՐԱԲԱՍՈՒ ԶԱՅՆԵՐ

1, Արևելեան բիւրօ.	1 ձայն
2, Հայաստանի »	1 »
3, Երկրի կեղր. կոմիտէ	1 »
4, Բազու	3 »
5, Շուշի	1 »
6, Գանձակ	2 »
7, Ջանդիզուր.	1 »
8, Թիֆլիս	5 »
9, Մովլափ	4 մթուժ
	Մուխում
	Սօչի
10, Ալէքսանդրապոլ.	4 »
11, Երևան	4 »
12, Կարս	2 »
13, Վան	4 »
14, Կարին Բասէն	2 »
15, Մուշ	2 »



22270

03443-62

10024

16.	Սերաստիա	1	Ճայն
17.	Հարք - Ապահովութիւն	2	»
18.	Բազրկանդ	2	»
19.	Կիլիկիա	2	»
20.	Իզմիր	1	»
21.	Պոլիս	4	»
22.	Պոլսոյ Հայաստ . բիւրօն հատւած	1	»
23.	Եգիպտոս	1	»
24.	Պալքաններ	2	»
25.	Ամերիկա	3	»
26.	Թէւրքան	2	»
27.	Հայաստանի Խորհրդարանի Դաշնակցական Խանութիւն	2	»
28.	Հ. Յ. Դ. Երևանի ն' ըկայացուցչական Խորհրդարդ	1	»
29.	Հ. Յ. Դ. Ռւս. միութիւն	1	»
30.	Հ. Յ. Դ. Աշակ. միութիւն	1	»

ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԶԱՅՆԵՐ

Ընդհ. ժողովի քառ. էրով, խորհրդակցական ձայնով ընդհ. ժողովին կը մասնացէին, դահլիճի դաշնակցական ընկերները և կարգմը կուսակցական զործիչ ընկերներ, թւով ընդամենը 18 հոգի:

Ժողովին ներկայ էին զնուական ձայնով 61 ողի խորհրդակցական՝ 19 ընդմենը՝ 80 ձայն:

ՆՈՒԱԶԱԳՈՅՆ ԾՐԱԴՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ
«Հ. Յ. Դաշնակցութեան 9-րդ ընդհ. ժողովը հանդիսաւորապէս նուիրազործելով անկախ

եւ միացեալ Հայաստանի յայտարութիւնը եւ ամբողջոցման եւ զարգացման ձգտելով բոլոր զօրութեամբ, ժողովրդավար (դէմօքտար) Հանրապետութեան հիման վրա, որուեց՝

Ա. Զեղեալ համարել կուսակցութեան նուազոյն ծրագրի Առաջատարանի եւ Տանկահայաստանի վերաբերեալ ժադարական պահանջները:

Բ. Ամբողջական ծրուգրի վերաբերութիւնը յետաձգւում է յաջորդ ընդհ. ժողովին:

ԱՐՏԱՐԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՈՒԹԻՒՆ

Լսելով զեկուցում Հայաստանի արտաքին քաղաքականութեան մասին և այդ ութիւն տեղի ունեցած վիճարանութիւնները Հ. Յ. Դ. 9 ըգ ընդհ. ժողովը կորուզ:

Ա. Հայաստանի արտաքին քաղաքականութեան առանցքը պիտի կազմէ միացեալ Հայաստանի անկուսութիւնը օտար պիտութիւններին ճանաչել տալու և ապահովելու մտահոգութիւնը:

Բ. Հայաստանի սահմանները որոշելու խնդրում արտաքին քաղաքականութիւնը պէտք է զեկավաւոր այն ծրագրով որ 1919 Յունվար 14-ին ներկայացւել է Փարիզի հաշտութեան համագումարին:

Գ. Դաշնակց պիտութիւններու հանդէպ պէտք է պահել մինչև այժմ եղած բարեկամական յարաբերութիւնը:

Դ. Ն'րկայ քաղաքական տնտեսական քաղաքակրթական հանգամանքներուն մէջ ընդհ. ժողովը ցանկալի է համարէ որ դաշնակց պիտութիւններու յա-

տուկ մանտաթով ժամանակաւորապէս հոգատարութեան տակ առնուի Հայաստանը:

Ծանօթ, ա. Հոգատարութեան (mandat) պայմանակրը որոշելու համար պէտք է հիմ բռնել աղքելու Դաշնակցութեան 19-րդ յուղածի համապատասխան տրամադրութիւնը (վարչական խորհուրդ և աջակցութիւն):

բ. Ըստէ. Ժողովը ցանկալի կատնէ որ յանձնառու պետութիւնը իր հոգատարութեան տակ առնէ բացառապէս Հայաստանը:

Ե. Լիակատար բարեացակամ վերաբերում ունենալով հանդերձ զէպի ոռու ժողովուրդն ու Ռուսաստանի քաղաքական վերաճնութիւնը, մեր դիւնագիտութիւնը պէտք է զիմադրէ Ռուսաստանում գոյութիւն ունեցող կառավարութիւններու փորձերուն՝ տարածելու Ռուսական իշխանութիւնը նախկին Ռուսահայաստանի վրա, և այդպէսով անհնարին դարձնելու Հայաստանի ամրողացման գործը:

Զ. Պարսկաստանի հետ պահպանել նոյն սերտ յարաբերութիւնը զոր ունեցեր է Հայաստանի արտաքին քաղաքականութիւնը մինչեւ օրս, և որ մեծապէս կը համապատասխանէ հայ ժողովրդի շիշտուած բարեկամական վերաբերմունքին դէպի պարսիկ ժողովուրդը:

Է. Վրաստանի հետ փոխս դարձ համաձայնութեամբ կարգադրել սահմանային և այլ վէճերը՝ նպատակ ունենալով տեսական մերձեցում առաջ բերել երկու դարաւոր հարեւան և մշակոյթով իրարունման ժողովուրդներու միջև:

Ը. Հրահանգել կառավարութեանը պահպանելով Հայաստանի և հայ շիշատաւորութեան շահերը Աղրաքչանի սահմաններում, աշխատել բարի դրացիական յարաբերութիւն պահպանել անոր հետ:

ՆԵՐՔՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԹԻՒՆ:

«Հ. Յ. Գ. 9-րդ ընդհ. ժողովը լսելով զեկուցում Հայաստանի կառավարութեան ներքին քաղաքականութեան մասին և նկատի առնելով,

Ա. Որ ստեղծած պայմաններում Հայաստանի անկախութիւնը հայ աշխատաւորութեան ֆիզիքական ապահովութեան և քաղաքական ազատագրութեան միակ գրաւականն է,

Բ. Որ այդ անկախութեան ամրապնդման և ապահովութեան համար պէտք է կազմակերպւեն ու օգտագործեն ռամկավար Հանրապետութեան և ժողովուրդների ազատութեան տհակէտի վրայ կանգնած բոլոր տարբերը:

Գ. Որ Ազբբէյջանի և Տաճկաստանի բէկական-աւատական գասի գաւադրական և հակայեղափոխական գործունէութիւնը որուն նպառակն է բնաջինջ ընել հայ ժողովուրդը և խորտակել նրա անկախութիւնը՝ զեսես շարունակում է Հայաստանի մէջ և Հայաստանի շուրջը,

Դ. Որ թաթար աշխատաւորութիւնը, շնորհիւ իր քաղաքակրթական յիտ մնացութեան ու գասակարգային անդիտակցութեան խողալիկ դառնալով բէկերի ու աղաների ձեռքին նպաստում է այդ ծրագրի իրականացման,

Ե. Որ այդ հակայեղափոխական և գաւադրական ծրագրին անհրաժեշտ է հակադրել աղքերի համերաշխութեան, զասակարգային կուի ու արևելիան ժողովուրդներու միջազգային միւրթեան գաղափարներն ու դրանց պայքարի եղանակները,

Զ. Որ Հայաստանի այդ սամկավար ընկերային, քաղաքական զիծը պէտք է հնարաւորութիւն տայ յարաբերութիւն պահպանել անոր հետ:

Հայաստանի աշխատաւորութեանը ի դէմս Հ. Յաշնակցութեան իրագործելու իր այդ առաքելութիւնը, յօրինակ արևելքի ժողովուրդների,

Է. Որ Հայաստանի աշխատաւորութիւնը իր գոյաւուրի ընթացքում տւած հակայական զոհերի և կրած անտեսական մեծ վնասների պատճառով կարու է պետութեան լայն աջակցութեան և հոգատարութեան, այս ամէնը նկատի ունենալով ընդհ. ժողովը որոշեց:

Ա. Իրեն հիմք պետական ներքին քաղաքականութեան ընդունել կուսակցութեան ծրագիրը, հետևողական և արագ կերպով իրականացնելով կեանքի մէջ նրա հիմնական սկզբունքներն ու պահանջւած ընկերային բարեփոխութիւնները:

Բ. Ռամկավարացնել պետութեան վարչական ամբողջ մեխանիզմը, վերացնելով միապետական կարգերի մեացորդները և կեանքի կոչելով ու զործունէութեան լայն ասպարէզ տալով տեղական ինքնավարութիւններին ու գիւղացիական կազմակերպութիւններին: Վարչութիւնը յանձնելով տեղական ինքնավար մարմիններին ու գիւղացիական միութիւններին:

Գ. Անյապաղ միջոցներ ձեռք առնել հեռացնելու հարչութիւնից հին բէմիմի պաշտօնեաներին:

Դ. Ամենակորցւկ միջոցներով արմատախիլ անել ամէն հակայեցափոխական և հակապետական շարժում՝ որ կողմից էլ որ դա կազմակերպւած լինի և ինչ ուժերի վրայ էլ որ դա յենու:

Ե. Ամենագնառական միջոցներով պայքար մղել Հայաստանի բոլոր ժողովուրդների մէջ տիրող զասակարգի դէմ, բութուա, բէկ, աղա, կուլակներ, նրանց ըստ ամենայնի չեղոքացնելով պետական, հանրային կեանքից: Զ. Կործօն կերպով աջակցել Հայաստանի աշխա-

տաւոր զանգւածների գասակարգալին կազմակերպմանը բանւորական և զիւղացիական խորհուրդների շուրջ:

Է. Ապահովել երկրի սա՞մաններում ապրող ազգային փոքրամասնութեանց ազգային մշակոյթի իրաւունքները և բոլոր այլազգիններին և այլազաւաններին ճանաչել իրեն Հայաստանի իրաւահավետսար քաղաքայիններ:

Ը. Բուս ամենայնի չեղոքացնել կդերականութեանը պետական գործերից և նախապատրաստական քայլեր առնել եկեղեցին պետութիւնից բաժնելու համար:

Թ. Աջակցել և կազմակերպել դրսի հայութեան ներկաղթը Հայաստան:

Ժ. Ուժեղցնել կուսակցական մարմինների գործունէութիւնը երկրում իրեն վերոյիշեալ ծրագրի երացործ անհրաժեշտ նախազայման:

Ճ. Ապեկցին ակցական մարմինների գործունէութիւնը իրեղի յեղափոխական իշխանութիւնը իր ծրագրի իրագործման համար յենու աշխատաւորութեան և նրա օրգանների վրայ:

Ժ. Վերոյիշեալ ազգային – ժողովրդական, ընկերային և վարչական քաղաքականութիւնը ընդգծելով ընդհ. ժողովը հարկ է համարում շեշտելոր ներկայումս Հայաստանը ապրում է վերապանցօրէն յեղափոխական ժամանակաշրջան և այդ պատճառով կառավարութիւնը չպէտք է կաշկանդւի „օրինական“ այն էլ ոռւսական օրինագրքերով, առաջադրուած ծրագիրը իրագործելու խնդրում, այլ հարկը պահանջած ժամանակ պէտք է դիմէ բացայաւ յեղափոխական միջոցների:

Զ Օ Ր Ք

Ասելով ընկեր Դրօի զեկուցումը զօրքի մասին, Հ. Յ. Դ.
9 ըդ ընդէ. Ժողովը ակնածանքով և յուղումով կարձա-
նագրէ անոր կատարած զերը հայկական ազատա
մարտի մէջ, և նկատի առնելով՝

Ա. Որ հայ զօրքը իր կազմուկերպութեան առաջին
օրից իսկ գտնւած է ամինադժնդակ և ծանր պայման-
ներու մէջ:

Բ. Որ այժմ իսկ անոր բարձր հրամանատարութիւնը
մասամբ կ գտնւի հայ աշխատաւորութեան և անոր
դատին անհարազատ և օտար տարբերու ձեռքը:

Գ. Որ այդ իսկ հանգամանքը թոյլ չի տար զօրքի
մէջ զարգացնել պետական և ժողովրդական ողին:

Դ. .

Ե. Որ հայկական բանակի մէջ կ շարունակի նախ-
կին Ռուսաստանի քանտայական և բննապետական
սովորութիւնները, կորոշէ՝

Ա. Պարտաւորիչ զինւութիւնը ընդունիլ իբր ան-
հրաժեշտ չարիք, քանի չէ լրացած և ամրապնդած
Ասկախ և Մի սցեալ Հայաստանը իբրև պետութիւն և
քանի Ազգերի Դաշնակցութիւնը գործնապէս չի ապա-
հովում փոքր ժողովուրդների պաշտպանութիւնը,
Այս անհրաժեշտութիւնը ընդունելով հանդերձ, ընդ-
հանուր ժողովը կը ցանկայ որ բանակի հազմակեր-
պութեան ձեւ աստիճանաբար ձգտի գէպի երկամեայ
զինւորագրութիւն, հասնելու համար համաժողովրդա-
կան բանակի (milice). Իսկ մինչեւ այդ, աղատութեան
և երկրի պաշտպանութեան համար, բանակը կազմել
քաղաքապահ (milice) և մշտական կանոնաւոր զօրքերից,
զինւորութիւնը պարտազիր հոչակելով Հայաստանի
բոլոր քաղաքացիների համար:

Բ. Արագորէն ազգայնացնել հրամանատարական
կազմը և բանակը, հոչակելով հայերէնը, իբրև միակ
և ընդհանուր լեզու:

Գ. Զօրքը անյապաղ երգւցնել Հայաստանի Հան-
րապետութեան:

Դ. Միջոցներ ձեռք անել վոխելու զօրքի արտաքին
նշանները զարդանիշ (cocarde), ունոց և հազուստի
ձեւ, ստեղծելով հայկական զինւորական համազգեստ:

Ե. Թարմանացնել հրամանատարական կազմը, հին և
միանգամայն ոչ վստահելի սպաներու տեղ դնելով
Հայաստանի Հանրապետութեան նուիրւած և պետու-
թեան հաւատարիմ երիտասարդ սպաներ:

Զ. Անյապաղ ջնջել հին կարգերէ մնացած զինւորա-
կան ձեւերը, որոնք իրաւապէս ջնջելեն ժամանակաւոր
կառավարութեան կարգադրութեամբ և զօրքը դաս-
տիարակել հայերէնիքի գաղափարով, ժողովրդապետա-
կան սկզբունքով և պարտաճանաչութեան ըմբռնումով,
ո ժեղ կարգապահութիւն հաստատելու պայմանաւ:

Է. Անմիջապէս պատերազմական նախարարութեան
կոչել դաշնակցական նախարարմը, ի հարկին ոչ զին-
ւորուկան, իրականացնելու համար Զ-րդ ընդհ. ժողովի
որոշումները բանակի վերակազմութեան մասին»

ՀԱՆՐԱՑԻՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Լսելով զեկուցումհանրային կրթութեան մասին ընդէ.
ժողովը հրահանգում է՝

Ա. Հնար եղած ին չափ շուտով իրագործել ձրի և
պարտադիր տարբական ուսումը Հանրապետութեան
ու աքացիների համար, առանց ազգի և սեռի խտ-
րութեան:

Բ. Արտօքէն աղջայնացնել հանրային կրթութիւնն
իր բոլոր աստիճաններով և ճիշդաւորութիւնը՝

Գ. Յատուկ ուշադրութիւն դաշնել ժողով գալան,
դպրոցների հասակաւոր հանրութեան կրթութեան վրա:

Դ. Վերակազմել հանրային կրթութեան համակարգը
ինքնազործունէութեան և աշխատանքի սկզբունքով՝
դպրոցը վերածելով կրթարան աշխատանոցի:

Ե. Ազգային փոքրամասնութեանց տորրական կրթութիւնը վարել նրանց մայրենի լիգով:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ և ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ
Խելով զեկուցում կառավարական կոսակցութիւն
դառնալու նիւթի մասին ընդհ. ժողովը որոշում է՝

«Հ. Յ. Իրբե ժողովը պետք է մեծամասնութեան կամքի
արտայայտիչը պէտք է պահէ իր ձեռքին կառավարութեան զեկը, աշխատելով տւեալ քաղաքական
տնտեսական պայմաններին համաձայն իրազործել իր ընկերային խտէալները:»

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԹԻՒՆ

«Ա. Հայաստանի հանրապետութեան Դաշնակցական
կառավարութիւնը իր ընկերային անտեսական քա-
ղաքականութեան առաջին խնդիրը պէտք է համար է
հողային հողի լուծումը բոլոր կարգի մասնատիքական
հողերի արտադրաւումով և համայնացումով, որ ամե-
նաարդար ու զրական միջոցն է իր երկրի աշխատաւոր
գիւղացի բազմութիւնների աշխատանքի ազատութեան
ապահովութեան և ընկերային տնտեսական զարգացման:

Բ. Կառավարութեան տնտեսական քաղաքականու-
թեան առանցքը պէտք է կազմէ մեր աշխատաւոր

գիւղացիութեան անտեսութեան գարգացումը համայ-
նական և զործակցական հիմնութիւն և իր նորաատարու-
թեան առաջին խնդիրը պէտք է համարէ և ամեն
կերպ պէտք է զարկ տայ չըաւոր գիւղացիութեանը;
գիւղացիական աշխատաւորական կօսպերացիային և
համայնական գիւղատնտեսութեանը ընտիր և էժան
սերմացու, անասուն, երկրագործական մեքենաներ
ու զործիքներ, պարարտացման արևեստական միջոցներ
և այլն մատակարարելով, փորձադաշտեր, փորձայ-
դիներ, երկրագործական գործիքների արհեստանոցներ,
գիւղատնտեսական դասընթացքներ ու դպրոցներ հի-
ներով, էժան վարկ բողնելով և այլն:

Գ. Երկրի մէջ տնտեսութիւն ստեղծելու տեսակէտէն
անհրաժեշտ նախագայման ըլլալով դրամագլխի ազատ
մուտքն, Դաշնակցական կառավարութիւնը պիտի քաջա-
լերէ թէ օտար և թէ մանաւանդ հայկական դրամա-
գլուխի մասնակցութիւնը երկրի գիւղաշնութեան,
ճարտարաբերութիւնը, հաղորդակցութեան և առեսութի
զարգացման համար:

Դ. Աշխատանքի և դրամագլխի անխուսափելի պայ-
քարի մէջ մեր կառավարութիւնը պէտք է կատարելա-
պէս ռամկավար օրէնողութեամբ զօրավիդ լինի
աշխատանքներին և աշխատաւորութեանը:»

ՀԱՅԱՑՄԱՆ ԲԱՆԱԶԵՒ

Խելով զեկուցում հայացման հարցի մասին Հ. Յ.
Դ. Զ-րդ ընդհ. ժողովը ցամով կը գիտէ որ ոչ միայն
Դաշնակցական կառավարութիւնը, այլ և կուսակցու-
թեան ձեռնահաս մարմինները ոչ մէկ ողակի և
զործնական քայլ առած են Հայաստանի Հանրապե-

տութիւն հայացնելու հետեւաբար կը պահանջէ
ա. Հայերէնը լնդունել իբր միակ լեզրւ բոլոր նա-
խարարութիւններու և ամէն տեսակի զործառութիւն-
ներու համար:

բ. Մինչև երեք ամիս արձակել հայերէնի ան-
տեղեակ պաշտօնեանները և այսուհետեւ հայերէն լե-
զուն նկատել է սկան կէտ՝ պաշտօնեաններու ընտրու-
թեան համար:

ԱՐԵԼԵԼԵԱՆ ԵԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐԾՈՆԵՐ

«Հ. Յ. Դ. 1X ընդհ. ժողովը լսելով Արելեան և Հայ-
աստանի բիւրօնների, նաև Հայաստանի բիւրօֆի Պօլսի
հատւածի զեկուցումները և դրանց տոփթով եղած
վիճաբանութիւնները և նկատելով՝

Ա. Որ զանազան հանգտմանքների բերումով բիւ-
րօնների անդամները շտո յաճախ ամիսներով և տարի-
ներով զուրկ են եղել տեսակցելու հնարաւորութիւնից:

Բ. Որ պատերազմի և յելափոխութեան ստեղծած
պայմանների շնորհիւ կուսակցական կարեսը մարմին-
ներ իրարից կտրւել են և զործել են տարբեր պե-
տական կազմութիւնների շրջանում:

Գ. Որ բիւրօնները մի շաբք ինպիրների նկատմամբ
չեն մշակել որոշակի գծագրւած մի տեսակէտ, որը
իբրև ուղեղիծ ընտրած՝ զեկավարէն կուսակցական
կեանքը:

Դ. Որ բիւրօնների անդամները, իրենց ընկերների
մեծ մասին նահատակման հետեւանքով և իրերի բեր-
ումով յաճախ ստանձնել են գործադիր պաշտօններ,
ազգային-հանրային և պետական հաստատութիւնների
մէջ, ինչպէս կամաւորական խմբեր, Ազգային բիւրօ-
և խորհուրդ, Սէյմ և Անդրկովկասեան կառավարու-

թիւնը և այլն, 1X ընդհ. ժողովը եղելակացնում է՝
Ա. Վերջին հինգտարիների ընթացքում, մեր կեանքի
ամենալավորը երեսյթների ժամանակ կամաւորական
շաբթման սկզբնաւորութեան, ոռուս մէծ յեղափոխու-
թեան և մեր պետական կեանքի սկզբնաւորութեան,
կուսակցութիւնը չէ կարողացել պահել մէկ ընդհ.
ուղեղիծ:

Բ. Կուսակցութեան զանազան մասեր, զործել են
տարբեր ուղղութիւններով և տարբեր ուժերի հետ
զործակցութեամբ:

Գ. Ասպարէզ է բացւել անհատ ընկերների անձնա-
կան քաղաքականութեան և անպատասխանատու գոր-
ծունէութեան, և զիտակցելով ծանրութիւնը այն պայ-
մանների որոնց մէջ վիճակուած էր բիւրօններին զոր-
ծել վերջին հինգտարին պատրաստութիւնը և ցանկութիւն
յայտնելով որ առաջիկայում բիւրօնների գործունէու-
թեան համար ստեղծեն այնպիսի պայմաններ որ նո-
քա ամէն վայրկեան հնարաւորութիւն ունենան հա-
ւաքական վճիռների և հաւաքական զործունէութեան,
ընդհ. ժողովը անցնում է հերթական օրակարգին:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵԻ ԿԱՄԱԿՈՐԱԿԱՆ

ՇԱԲԺՈՒՄԸ

Բնդհ. Ժողովը երկարօրէն և թեր ու դէմ վիճա-
բանութիւններէ յետոյ, Արելեան և Հայաստանի
բիւրօններու ղեկուցումներու շուրջ, իկաւ հետեւալ
սղերակացութեան՝ կամաւորական շաբթման մասին,
նկատելով՝

ա. Որ հայկական կոտորածները կը ըխէին
պատմականօրէն և փաստօրէն ապացուցւած համա-

Թուրքական երիտասարդ թուրքացի հայաջինջ քաղաքականութիւնէն:

բ. Որ կամաւորական շարժումը անխուսափելի հետեանքնէր համաշխարհային պատերազմէն բխած քաղաքական վերիվայրումներուն, որոնք անհնար կը դարձնէին հայ ժողովուրդի չեղոքութիւնը:

գ. Որ այդ շարժումը հայ ժողովուրդի պատմական տեսչերուն և ձգտումներուն ինքնարուխ արտայայտութիւնն էր:

դ. Որ Հ. Դաշնակցութիւնը չէր կրնար պատմական այդ վայրկանին առջև մնալ անտարեր և թոյլ տալոր ժողովուրդին այդ շարժումը մնար անդեկ:

Եկատելով միաժամանակ, որ կամաւորական շարժումը ըլլալով Հ. Դաշնակցութեան 25 տարիներու յեղափոխական գրծունելութեան տրամաբանական և հետեղական արտայայտութիւնը, կուսակցութիւնը պէտք էր այդ շարժումը ղեկավարէր զիւռոյական ամենախիստ կարգապահութիւնով, որպէսզի թոյլ չի տրէր պատահական անձերու խումբեր կադակերպիլ:

Կ'որոշէ

Վճռապէս մերժել ըուլոր այն կարծիքները, թէ հայկական աղէտները ուղղակի հետեւանք էին կամաւորական շարժումին, լնդհակառակը այդ շարժումը նկատել հայ ժողովուրդի ինքնազաշապանական մէկ պատմական փաստ և մեր քաղաքական ազատագրութեան աղղակի:

Մ Ա Մ Ո Ւ Լ

Ակնելով մամուլի մասին ղեկուցում և նկատի առնելով այն հանգամանքը, որ կուսակցական մամուլը

վերջին ժամանակներս զանազան պատճառներով, յաճախ հանդէս է բերած անհաշտիլի տարակարծութիւններ կարգ մը գործելակերպի (tactique) ինդիքներու շուրջը:

Նկատի ունենալով և այն՝ որ այս փոխանցման շրջանին կուսակցական միակերպ քաղաքականութեան բացակայութիւնը մեծապէս կը վկանէ մեր վարկին և աշխատաւորութեան շահերուն, ընդ ու ժողովը որոշումէ՝

Ա.) Հրահանգել բիւրօխն ամէն կերպ նպաստելով կուսակցական սամուլի զարգացման, պարբերական և կանոնաւոր տեղեկատութեամբ և ցուցութերով ղեկավարել մամուլը լնդհ կուսակցական խնդիրների մէջ, վերապահելով իրան լիակատար աղատութիւն տեղական հարցերի մասին:

Բ.) Ունենալ մէկ կենտրոնական օրգան, որը լինելու է արտայայտիչը բիւրօխ ուղղութեան և քաղաքականութեան:

Գ.) Ունենալ գիտական պարբերական մի օրգան, որը լինելու է ԴԻՌԾԱԿ-ը:


Դ.) Կուսակցան թերթերը պարտաւոր են պահպանել կենդրուական օրգանի ուղղութիւնը և չեղուել հիմնական հարցերի մասին նրա բռնած դիրքից:

Ե.) Զենարկել կուսակցական հրատարակութեանց «Դաշնակցութեան մատենաշար» անունով, հրատարակելու համար տեսական խնդիրներ, ինչպէս և մեր հայրենիքի, տնտեսական, ընկերացին և այլ հարցեր ուսու մնասիբող գրքեր ու գրքոյներ:

Զ.) Հիմնել կուսակցական կետրոնական մի տպարան:

Է.) Կազմել Հ. Յ. հրատարակչական մի մարմին:

Ը.) Բացի կեցր հական երկու օրգաններից միւս բոլոր թերթերը պէտք չէ որ մատակարարւեն կուսակ-



ցական սովորական հասոյթներով, այլ պէտք է հողացւեն բացասիկ միջոցներով:»

Հ. Յ. Դ. ՊԱՏՄՈՒԹՈՒԽԵՐԸ

«Լսելով գեկուցում կուսակցութեան պատմութիւնը գրելու մասին ընդէ, ժողովը որոշում է՝

Ա) Մինչեւ 1922 թ. հրատարակել մի հատորի մէջ Դաշնակցութեան պատմութիւնը լայն զանգւածների համար մատչելի ձեռվ:

Բ) Զեռնարկել կուսակցութեան հիմնական պատմութեանը գրելուն:

Գ) Հրատարակել կուսակցութեան պատմութեան վերաբերող նիւթերը «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան» վերնարդով:

Դ) Հրատարակել հանգուցեալ գործիչ ընկերների պատկերներով ու կենսագրութիւններով, ինչպէս նաև կուսակցութեան կեանքից առնւած լուսանկարներով գեղարեսատալան ալրօմ:

Ե) Յանձնարարել ձեռնհաս ընկերներին գրել և հրատարակել կուսակցութեան կեանքից գրւագներ ու կենսագրականներ:

Զ) Հաւաքել կուսակցութեան կենտրոնական արխիւտում Հ. Յ. Պատմութեան վերաբերող հրատարակւած և թէ անտիպ նիւթեր հայերէն և օտար լեզուներով նամակներ, յիշատակարաններ, յեղափոխական ակդինկարագրութիւններ, ձեռագիր, խմորատիպ ու տպագիր թղթեր, թուոցիկներ, յայտագրեր (պլակատ), գրքեր նկարներ և այլն:

Է) Անհրաժեշտ միջոցներ ու յարմարութիւններ տալով, պարտաւորեցնել ընկերներին գրի առնել իրենց յիշողութիւնները:

Ը Կազմել և ընկերների մէջ տարրածել կուսակցութեան պատմութեան նիւթերի հաւաքման վերաբեր ողող մի հարցացուցակ, պարտաւորեցնելով որոշ ժամանակամիջոցում պատասխաննել տրւած հարցերին:

Թ) Այս ձեռնարկների իրազործման համար կուսակցութեան զբամարկվից յատկացւում է որոշ պիտօնէ:

Ժ) Բիւրօն կը հսկէ այս որոշումների գործադրութեան պիտօն:

ԲԱՆԱԳԵՒ Հ. Յ. ԱՐՄԻՒՆԵՐՈՒ ԿԱՐԳԱԿՈՐՄԱՆ
ԵՒ ԹԱՆԳԱՌԱՆ ԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Հ. Յ. Դաշնակցութեան 9-րդ ընդհանուր ժողովը լսելով զեկուցում կուսակցութեան դիւանաթղթերու կարգաւորման և թանգարան կազմելու մասին, որոշեց:—

«Ա) Այդ գործերու կազմակերպութիւնն ու հսկողութիւնը յանձնել կուսակցութեան գերագոյն գործադիր մարմնին:

Բ) Միաժամանակ հրահանգել կուսակցական բալոր մարմիններին, կազմակերպութիւններին ու անհատ ընկերներին, թէ արխիւտ և թէ ֆանգարանի վերաբերեալ բոլոր նիւթերը հաւաքել և արամագրել գործադիր գերագոյն մարմնին:»

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊՐՕՊԱԿԱՆՏԻ ԴՐԱՌ:

«Լսելով զեկուցում կուսակցական դպրոցի մասին ընդէ, ժողովը որոշում է՝ յանձնարարել բիւրօն ծրագիր

մշտկել այդ առթիւ և աշխատել ամենակարձ ժամանակամիջոցով կիրառել զայն մեր կեանքում:»

Հ. Յ. ԵՐԵՍՆԱՄԵԱԿ

«Լսելով զեկուցում Հ. Յ. Երեսնամեայ յօբելեանի մասին, ընդհ. ժողովը որոշում է՝

Ա.) Հանդիսաւոր կերպով տօնել Հ. Յ. Երեսնամեակը 1920-ին:

Բ.) Տօնական հանդէսների համար յատկացնել որոշ օր և այդ օրը բոլոր վայրերում կազմակերպել հանդէսներ:

Գ.) 1922-ին արձան կանգնեցնել Հայաստանի մայրաքաղաքում, ազատութեան համար զոհւած բոլոր ընկերների համար:

Արձանի համար այժմէն բաց անել ընդհանուր հանգանակութիւն, այժմէն յայտարարել մրցում, լաւագոյն արձանի համար և ընորել հեղինակաւոր և վատահելի արևետագէտներից մի ժիւոի:

Դ.) Մինչև 1922 թ. Հայաստանի մայրաքաղաքում ստեղծել Հ. Յ. պանթէոն և այնտեղ փոխադրել Հայաստանից գորս թաղւած կուսակցութեան դեկանար ընկերների աճիւները:

Ե.) Ազատութեան արձանի հանգանակութեան կազմակերպումն ու զեկավարութիւնը յանձնել Ամերիկայի կենտր. կօմիտէին:»

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ և ՄԻԶԱՋԻԱՅԻՆ ԸՆԿԵՐ- ԴԱՐՈՒԹԻՒՆԸ

Հ. Յ. Դաշնակցութեան 9-րդ ընդհ. ժողովը կընդունի՝

«Ա. Որ միջազգային աշխատաւորութեան յեղափոխական ընկերվարական կուռ բանակը միայն կրնայ վերջնականապէս խորտակել տնտեսական ու քաղաքական աշխարհակալութեան ուժը:

Բ. Որ ժողովուրդներու իսկական ու ամբողջական ազատազրումը կիրականանայ միայն բոլոր երկիրներու և ազգերու աշխատաւորներու դասակարգային անողոք-պայքարով, միջազգային միութեամբ ու համերաշխութեամբ:

Գ. Որ Հ. Յ. Դաշնակցութիւնը իրեկ միջազգային ընկերվարական ընտանիքին հաւասար ու հարադատ անդամ այսուհետեւ ևս պէտք է սերտ ու անխտիստ յարաբերութիւն պահպանէ վերակազմելու համար ընկերվարական էնթէոն ստիծուալը՝ որ պառակտած ու կերպարական համար համար ընկերվարականներու դասաքութեան պատճառով:

ՊՈՂԱՍ-ՆՈՒՊԱՐԻ ՊԵՏԻՔՎԱՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԲԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԵՐ ՀԻՄՔԵՐ՝ ՏՐԻԾ ԲՆԻՑ. ՓՈՂԱՎԻ ՄԵՐ ԲԱՆԱ- ԿԵԼՈՒՆԵՐՈՒՆ

ա. Սկզբունքով կընդունւի բանակցութեան սկսելու բանակցութիւնը պիտի կատարէ կուսակցութիւնը:

բ. Երկու պատիբակութիւնները միացնելով կազմել մէկ պատիբակութիւն: Պատւիբակութիւնը պիտքէ զեկավարի Հայաստանի Հանրապետութեան հրահանգներով և պատասխանառու է անոր առջև:

Պատեիրակութեան պես կարող է լինել Պօղոս-Նուզարը:
դ. Թէ Հայաստանի Հանրապետութեան սահմանաբառում մէջ և թէ Հանրապետութեան սահմաններէն դուրս նշանակել լրացրաց ցիչ ընտրութիւններ:

ե. Խորհրդարանի լրացրաց ընտրութիւններ կատարել 50 (յիսուն) նոր պատգամաւորներու, Հայաստանի սահմաններէն ներս և անկէ դուրս, Հայկական Հանրապետութեան օրէնքների հիման վրայ:

դ. Կառավարութեան անդամներուն կէ-էն ոչ պահանջ կը նշանակի արևմտահայերէն:

է. Ապահովելով գաշնակցական մհծամասնութիւնը, կառավարութեան մէջ կարող ենք տեղ տալ նաև Փարիզի Պօղոս Նուզարի պատվիրակութեան թիկնածուներուն, պայմանաւոր պատասխանատու ըստ պարլամենտին:

ը. Յայտարարել ընդհ. ժողովի բանագնացներուն որ Պօղոս-Նուզարի պատվիրակութեան հետ բանակցելու ատեն ամբողջապէս կանգնեն ընդհ. ժողովի մակած պայմաններուն վրայ: Այդ պայմանները ամբողջապէս չընդունելու պարագային բանակցութիւններին պէտք է վերջ տալ:

Վերկրի եեօթ, ԿՕՄԻՏԵԻ ԼՐԻՇՈՒՄ

Բնդէ. Ժողովը լսելով երկորի կետը կօմիտէի զեկուցումը, գտնում է, որ նման անջատ մարմինների զոյութիւնը միենոյն վայր ում չի համապատասխանում կուսակցութեան կանոնական պահանջներին՝ և միենոյն ժամանակ գտնում է, որ այդ մարմինները կուսակցութեան մէջ մտցնում են անիշխանութիւն և հակասութիւններ և պատճառ դասում հաստած ային վնասակար

կրկոյթների զարգացման, ուստի ընդհ. ժողովը հրահանգում է:

Ա) Թոյլ չտալ մի կեդր. կօմիտէի սահմաններում, մի այլ կետը. կօմիտէի գոյութիւնը:

Բ) Կետը. կօմիտէի սահմանների մէջ եղած քուրով կօմիտէները պիտի հնթարկուեն այդ շրջանի կետը, կօմիտէին միայն:

ՈՒՂԱՆՈՂԱԿԱՆ ԵՒ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԵՐ

Հ. Յ. Դաշնակցութեան Զ-րդ ընդհանուր ժողովը նկատի ունենալով.

ա. Որ Հ. Յ. Ռւսանովական Միութիւնը անցեալ հինգ տարիներու ընթացքին իր գործօն բաժինը բերած է հայ հերոսամարտին և գաղթականական գործերուն մէջ, և տւած է բազմաթիւ զահեր հայ ազատագրական պայքարին,

բ. Որ ռւսանովութիւնը հայ կենքի. մէջ ունի կատարելիք մեծ զեր ներկային և ավագային:

գ. Որ Ռուսական մեծ յեղափոխութեան ժամանակ Ռիութիւնները կը ներկայացնեն գայքայած դրութիւն:

դ. Նկատելով միաժամանակ, որ վերջին տարիներու վերիվայրութեանը ընթացքին Հ. Յ. Ռւսանով. Միութիւնները ընդհարապէս կը ներկայացնեն քայքայած դրութիւն:

Կուրով,

ա. Իր յարգանքը յայտնել Հ. Յ. Ռւսանով. Միութիւններու անդամ նահատակ ընկերներու լիշտակին և գնահատել գործօն մասնակցութիւն. Եկուղ կենդանի ընկերներու ճիշերը:

բ. Հըսափրել բիւրօններու և կետր. կոմիտէներու ուշադրութիւնը ուսանող. միութիւններու ներկայ դրութեան վրայ և ուժ տալ անոնց վերակազմուեռ և վերականգնեցնել զանոնք իրեց սահմանւած կոչումի ուղին վրայ:

* *

«Հ. Յ. 9-րդ ընդհ. ժողովը անհրաժեշտ գտնելով դաշնակցական երիտասարդ սրունդի և աշակերտութեան կազմակերպումը և զնահատելով արդէն կազմակերպւած աշակերտութեան թափած ջանքերը՝ կմըրէ:

ա. Դաշնակցական աշակերտական միութիւնները ձանաչել կուսակցական մարմիններ և ամեն կերպ աջակցել ու քաջալիրել նրանց:

բ. Ընդունել նրանց ներքին կազմակերպութեան եղանակը՝ ըստ աշակերտական միութիւնների կանոնադրութեան:

Գ. Ցանձնաբարել կուսակցական վերապոյն դորածադիր մարմինին ամեն կերպ աջակցել աշակերտական միութիւնների կենտր. բիւրօնին, ընդլայնելու վերջինիս գործունէութիւնը բոլոր վայրերի հայ աշակերտական շրջաններում:»

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԽՆԴԻՇԵԲ

ՍԱՀՕԻ ՄԱՍԻՆ. Լսելով Սաֆօի նամակը և այդ առթիւ կարծիքի փոխանակութիւն, 9-րդ ընդհ. ժողովը որոշեց:

«Համարելով տեխնիքապէս անհարին վերաբննել Սաֆօի գործը, ընդհ. ժողովը որոշում է այդ հարցով չըբարեւել:»

Միանգամայն:

«Նկատի ունենալով Սաֆօի 12 տարւայ քօրրէքթ ընթացքը դաշնակցութեան հանդէպ, 9-րդ ընդհ. ժողովը կ'որոշէ բաւական համարել Սաֆօի 12 տարի կազմակերպութիւնէն դուրս մնալը և թոյլ տալ անոր մտնել կուսակցութեան մէջ, եթէ վերջինիս կողմէ դիմում լիսի:»

ՍԱՐՃՈՒԾԻ ՄԱՍԻՆ. «Լսելով Պալքաննեան կետր. կօսիտէի ներկայացուցչի տեղիկութիւնները Սարճատի խնդրոյն մասին, ինչպէս նաև Պոլոյ ընկերներու լրացութերը 9-րդ ընդհ. ժողովը կը զանէ օրինական վերոյիշեալ ընկերոջ կըկին կազմակերպութեան մէջ մտնելը:»

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՆՊԱՍԻՒ ԴՐԱՄԱ- ԳԼՈՒԽ

Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Բ

1. Մեռած ընկերների թաղման ծախսերը հոգալու և նրանց ընտանիքին նպաստելու նպատակով կազմում է Հ. Յ. Դաշնակցութեան նպաստի դրամագլուխ:

2. Նպաստի դրամագլուխը կազմում է

ա) կենտ. կոմիտէների ընդհանուր եկամտի
20/-ից:

բ) Բիւրօի յատուկ եկամուտների 20/0-ից:
գ) Դաշնակցական մարմինների յատկապէս
այս նպատակով կազմած ձեռնարկների և յատ-
կապէս այդ նպատակով կազմակերպւած հան-
գանակութիւնների արդիւնքից:

3. Նպաստի դրամագլուխը մնում է բիւրօի որա-
մադրութեան տակ որ և պահում է այդ գումարի ել
և մուտքի հաշիւը:

4. Նպաստի գումարից հոգացւում են՝

ա) Մեռած ընկերոջ թաղման ծախսերը;
բ) Մեռած ընկերոջ ընտանիքին տալիք
նպաստը:

5. Նպաստի դրամագլխից օգտական իրաւունք
ունին:

ա) Որեէ մարմնի աղատ անդամները, եթէ
մեռած վայրկանին այդ պաշտօնին են եղած
և կարօտ են;

բ) Նրանք, որոնց մասին յատուկ որոշում
կտրւի:

6. Մինչև ընդհանուր ժողովի գումարումը բիւ-
րօի որոշմամբ կամ կ. կոմիտէի որոշումով և բիւրօի
հաւանութեամբ հոգացւում է մեռած ընկերոջ թաղման
ծախսը և միանաւած նպաստ է արւում նրա ընտա-
նիքին: Ընդհ. ժողովը վաւերացնում է եղած ծախսերը
և որոշում է կայացնում յետագայ նպաստի մասին:

7. Մեռած ընկերոջ ընտանիքին պարբերաբար
նպաստելու առաջարկ ընդհանուր ժողովին անում են
կ. կոմիտէները կամ բիւրօն ներկայացնելով գրաւոր
գլուխում մեռած ընկերոջ ընտանեկան կազմի և
նիւթական կացութեան մասին:

8 Ընդհանուր ժողովին ամեն անդամ որոշում է

տալիք նպաստների չափը մինչև յետագայ ընդհ. ժողով:
9. Նպաստները լինում են միանւագ և պար-
բերական:

10. Միանւագ նպաստ տրւում է:

ա) Ընկերոջ թաղման համար:

բ) Ընկերոջ բժշկութեան համար:

գ) Ընկերոջ ընտանիքին՝ նրա մահից յետոյ
երեք ամսւան նպաստի չափով:

11. Պարբերական նպաստ տրւում է ընդհանուր
ժողովի որոշումով. ա) Հանգուցեալ ընկերոջ անրաժման
կնոջը, մինչև որդիների չափահաս դառնալը, մինչև
նորից ամուսնանալը կամ մինչև մահը, եթէ որդիներ
չունի և կրին չի ամուսնանում:

բ) Հանգուցեալ ընկերոջ հարազատ կամ
խորթ ծնողները եթէ ապրել են նրա աշխա-
տանքով և ապրուստի ուրիշ հնար չունին:

գ) Հանգուցեալ ընկերոջ հարազատ որդիները
մինչև 19 տարեկան հասակը:

12. Եթիւ նպաստը պէտք չէ վար լինի մի հոգու
գոյապրուստից (իգղիսդինց-մինիմում): Լսու այսմ
կինն ստանում է լրիւ նպաստ, որդիներ կէս նպաստ.
ծնողները՝ նոյնպէս:

13. Սոյն կանոնները կիրարկելի են 1920 թ. յու-
նիսից յետոյ:

Մասնօթ. Նպաստի հատուցման ժամանակ զեղչում է այն
գումարը, որ հանգուցեալ ընկերոջ ընտանիքն ստանում է որեէ
ուրիշ հսարակական կամ պետական հիմարկութիւնից:



միքած երջ տրուած եւ լոյն պահանջարկ դրսու-
արք և բանակ աւ համա շրմանց ա

1) Առաջ առարձ գուշակ ա

այսու ժամանակ խորհրդակա

լուս պահ առա մասնաւու խորհրդ (ա)

Խորհրդ պահար մասն զիս
դաստիար և նույն առարձ մաքանիցը (ի)
անհայտ խորհրդ բացարձան (ա) ինչպէս մաքանից
ազէն պահար առաջ պահար անձաւ ան-
դամը (ա) Այս ազաւ պահ առաջ առաջ ան-

նոյ առաջամ խորհրդ յածքարման (ի)
առաջ այս և զիս այս անձարմանը

անձարման զիս առաջ առաջ ան-
դամը պահար խորհրդ յածքարման (ի)

պահար անձաւ անձաւ անձաւ պահար (ի) անձաւ
անձաւ անձաւ պահար անձաւ պահար (ի) անձաւ
անձաւ անձաւ պահար անձաւ պահար (ի) անձաւ
անձաւ անձաւ պահար անձաւ պահար (ի) անձաւ

անձաւ անձաւ պահար անձաւ պահար (ի) անձաւ
անձաւ պահար անձաւ պահար (ի) անձաւ
անձաւ պահար անձաւ պահար (ի) անձաւ



